ւորութեան կամ ամբողջ մրցանակը (500 ռ.) և կամ սորա մէկ մասը կընդունին։

6.—Գրաքննիչ յանձնաժողովն ամեն երկամեակ լրագիրների միջոցաւ կհրատարակէ իւր դատողութիւնքը մրցանակ գրաւող գործերի վերայ և կանխաւ կը յայտնէ թէ ուր և յանուն որոյ առաքուելու են յաջորդ երկամեակի մրցանակին հետամուտ շարադրութիւնքը։

7.—Առաջին մրցանակը տրուելու է 1877 թ. սկզբում, իսկ միւսները հետզհետէ ամեն մի երկամեակ։

8.—Մրցանակի հետամուտ շարադրութիւնքը պարտին առաքուիլ իւրաքանչիւր երկամեակի ընթացքում մինչև յաջորդ մրցանակաբաշխութեան տարւոյ Յունվար ամիսը։

Ծանօթ. Առաջին՝ այս ինքն 1877 թ. մրցանակին մասնող շարադրութիւնքն ուղարկուելու են ի Պետերբուրգ Տէր Յովհաննէս քահանայ Պօղոսեանին՝ Невскій проспектъ, д. Армянской церкви.

St. Pétersbourg, Perspective de Newsky, maison de l'église Arménienne.

(Յաջորդ թերթի կթողումք այսպիսի գովելի և բարենպատակ Մրցանակի վերայ մեր մի քանի խօսքը)։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Բարեգործական ընկերութիւն Ռուսաց Աստրախանայ առաջի արար Հոգաբարձութեանս Ծըխական—Հոգևոր երկսեռ դպրոցաց Հայոց քաղաքիս զհինգ հարիւր յիսուն և եօթն ռուբլին՝ կըցորդելով՝ թէ զայս գումար զկէս մասն հանեալ ի դոյացեալ դրամոց ի թատրոնական ներկայացմանէ, որ եղև միջնորդութեամբ Հայոց երիտասարդաց ի 14 Փետրվարի տարւոյս՝ նուիրեալ է յօգուտ Օրիորդական դպրոցի Հայոց քաղաքիս։

Ուստի Հոգաբարձութիւնս խնդրէ ի խմբագրութենէդ հրատարակել զայսպիսի ուսումնասիրական նուիրագործութեանց վերոյիշեալ Ընկերութեան նշանաւոր գումարոց՝ յէջս «Արարատ» ամսագրոյ ի գիտութիւն համայնից։

Հոգաբարձուք Ս. Պօղօվեանց
Սար. Բուրջալեանց
Գրիգոր Սողոմոնեանց

№ 13

Ի 11 Մարտի 1875 ամի,
Յաստրախան։

ՀԱՇԻՒ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒԱՅ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Խորհրդական Անդամք տեսանելով ընդ սմին զհաշիւ գումարոց Մարդասիրական Ընկերութեան վասն 1874 ամի՝ խոնարհաբար խնդրում են թոյլ տալ տպագրել նորան Ձեր պատուական ամսագրի թերթերում ի գիտութիւն Անդամոց Ընկերութեան և ամենայն հասարակութեան Հայոց։

Նախագահ խորհրդոյ Խ. Բանանեանց
Անդամք խորհրդոյ Ներսէս Կրասիլնիկեանց
Գրիգոր Դիլտարեանց
Յակոբ Ալլէսեանց
Առաքել Մատուրեանց
Գրիգոր Այվազեանց
Գանձապետ Գրիգոր Թումանեանց
Ատենադպիր Ս. Վարշամեանց

15 Փետրվարի 1875 ամի
ի Բագու։

(Հաշիւ մուտից և ծախուց գումարոց Մարդասիրական Ընկերութեան յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ի Բագու վասն 1874 ամի.)

ՄՈՒՏՔ.

Առ 1ն Յունուարի 1874 ամի մնացել էր ընկերապատկան գումար,

Ա. 45 հատ խաղարկական 5% բիլէթներ հաշուելով իւրաքանչիւրը 104 ռ. 50 կ. . 4702 50 — Ռ. Կ.

Բ. Զուտ գումար . 6963 2

11665 52

Հաշտարխան գաւառներից ուղարկած ընծայաբերութիւն . . . 20

Ի 26ն Յունվարի 1874 թիւ ներկայացրած թատրոնից օգուտ ստացուած 140 88

Զատկի օրն միմեանց փոխադարձ այցելութիւն չանողներից՝ որք փոխանակեցին դրամական ընծայաբերութեամբ . . . . 58

Յընթացս 1874 թ. անփոփոխ և տարեկան անդամութեան կարգը մտած ի ներքոյ յիշեալ պարոններից նուէր.

Անփոփոխ Անդամք.

Ա. Մ. Մամիկոնեանց, Գ. Գալամեանց, Ս. Թադէոսեանց, Պ. Խ. Խաչիկեանց, Յ. Մ. Լիսիցեանց, Ա. Խ. Աղայեանց, Ա. Պ. Առաքելեանց, Ա. Յ. Մալիեանց, Ա. Ա. Բադալբէօվխեանց, Յ. Ա. Սահակեանց, Գ. Մ. Զարգարեանց, Գ. Ճգնաւորեանց, Յ. Յ. Գուրգինբէկեանց, Տիկին Կեկելէ Յ. Պրոտոպոպովեանց, Գ. Ս. Աղաբեկեանց, և Պ. Յ. Կիլանցեանց՝ իւրաքանչիւրից 100ական ռուբլի . 1600

Տարեկան Անդամք.

Ա. Սէրկէյեանց, Վահան Վարդապետ Բաստամեանց, Ա. Գ. Սահակեանց, Յ. Պապովեանց, Կ. Քոչարեանց, Գ. Քիւրքչեանց, Գէորգ բէկ Վարդանեանց, Համբարձում բէկ Իւզբաշեանց, Գ. Միրզա Աւագեանց, Յ. Մէհրաբեանց, Ս. Զարգարեանց, Յ. Տէր Իսրայէլեանց, Գ. Տէր Իսրայէլեանց, Յ. Փիրզադեանց, Յ. Մելքոնեանց, Յ. Սէրկէյեանց, Յ. Շահնազարեանց, Ս. Սանփանեանց, Ա. Շմիդտ, Գէորգ բէկ Մարգանեանց, Մկրտիչ բէկ Տէր Մկրտչեանց, Պ. Շահակեանտեանց, Ա. Յ. Ենգիբարեանց, Յ. Դ. Փաթալեանց, Կ. Ա. Տէր Ներսէսեանց, Մ. Ամիրխանեանց, Պարուչիկ Ա. Մելիքեանց, Ս. Երեմիոխեանց, Ա. Գ. Յովհաննէսեանց, Ազնուական Կ. Մելիքեանց, Մ. Դալիչեանց, Տէր Գրիգոր Թումանեանց, Մ. Ա. Գրիգորեանց, Ա. Յ. Տէր Իսրայէլեանց, Գէորգ Յովհաննէսեանց, Պօղոս Քահ. Եպիսկոպոսեանց, Անդրէաս Քահ. Տէր Միքայէլեանց, Ա. Յ. Գ. Մամիկոնեանց, Դանիէլ Քահ. Տէր Բաղրամեանց, Յ. Ա. Կարագուլեանց, Յ. Բաղիեանց, Ազնուական Մ. Մելիք Շահնազարեանց, Տիկին Բարօնեսայ Ե. Ե. Ֆօն-Բրիւկկէն, Կ. Յ. Հախվերտեանց, Ա. Ամիրխանեանց, Կապիտան Ա. Դուկասեանց, Տիկին Մարիամ Դուկասեանց, Կ. Յարութիւնեանց, Ա. Մելիք Ռոստոմեանց, Պ. Մանուէլեանց, Յ. Տէր Յովհաննէսեանց, Ն. Մահտեսի Բարսեղեանց, Պոլկովնիկ Բ. Մ. Շոլկովնիկեանց, Կ. Տիգրանեանց, Ա. Մելիք Ազարեանց, ընդ ամենը 55 անձինք, համարելով իւրաքանչիւրից հնգական (5) ռուբլի . . 275

Ընծայաբերութիւն ի Պ. Միքայէլ Օրբէլեանցէ յօգուտ Ընկերութեան գրադարանի . . . 50

Խասավիւրտից Պ. Իւզբաշեանցից ստացած . . . . 25

Հոփիփիմեան Օրիորդաց ուսումնարանի թոշակաւոր աշակերտուհիներից . . . . 45

Ընկերութեան շինութեան վարձու տուած ճամբարից և մի սենեակից . 84 40

Ընկերութեան դրամագլխի տոկոս, Ա. 45 հատ խաղարկական բիլէթներից . . . 337 45

Բ. 6963 ռուբ. զուտ գումա-րից . . . 1054 81 1391 63

Ընկերութեան տպարանից, որ տը-ւած է կապալու Գ. Աստուածատուր Թարվիզեանցին . . . 550

Ընդ ամէնը 15905 43

Ծանօթութիւն: Վերոյ անուանեալ Անդամներից յընթացս 1874 ամի մտել են ընկերութեան Անդամոց կարգը 8 անձինք անփոփոխ և 31 տարեկան, յորդորանօք Անփոփոխ Անդամ Գ. Ներսէս Տէր Ներսէսեանցի. Իսկ մէկ անփոփոխ և 20 տարեկանք՝ ըստ առաջարկութեան խորհրդական անդամ Գ. Գրիգոր Այվազեանցի.

ԾԱԽՔ.

| | | |
|---|---|---|
| Ընկերութեան Օրիորդաց ուսում-նարանի երկու վարժապետաց ռոճիկ | 591 | 66 |
| Բագուայ Ռէալական ուսումնարա-նում ուսանող Գ. Աղամալեանցին | 7 | 50 |
| Դարձեալ անդ ուսանող Նոյնպէս Արէլեանցին և Տէր Սարգսեանցին (որդեգիրներ) . . . | 192 | 33 |
| Ս. Պետերբուրգ բժշկական դասի համալսարանում ուսանող որդեգիր Տէր Օհանեանցին . . . | 100 | |
| Մոսկվայ ուսանող որդեգիր Մէհ-րաբեանցին . . . . | 120 | |
| Այրի կին Միլեանսկուն՝ որ ու-սանում է մանկաբարձութեան արհես-տը Ս. Պետերբուրգի մնացեալը . . | 15 | |
| Առաքեցաւ Սամարու քաղցելոց համար Թատրոնի ժողոված գումարը | 139 | |
| Այրի կնոջ Մկրտչի Բաղդասարեան Այվազեանցի սահմանեալ տարեկան վարձ . . . . . | 103 | |
| Խորհրդարանի համար գործավա-րական մանր ծախք . . . | 41 | 36 |
| Փոստայի ու հեռագրական ծախք. | 18 | 86 |
| Վաղարշապատի ուսումնարանաց համար . . . . | 41 | 26 |
| Աշակերտուհեաց համար գնեցաւ ձեռագործութեան զանազան պա-րագայք. . . . . | 31 | 53 |
| Եւ ի նպաստ աղքատ աշակերտու-հեաց բաշխուեցաւ ուսանելի գրեանք | 12 | 95 |
| Ռոճիկ պահապանին. . . | 72 | |
| Ընկերապատկան խաղալիկական բիլեթները ապահովացնելու Յունկերի կանտորում . . . . | 14 | 70 |
| Ըստ վճռոյն խորհրդոյ հարկաւոր-վեցաւ բիլեթներն փոխարինել կիսով չափ՝ երկրորդն ընդ առաջնոյն, որոնց համար ծախս եղաւ . . . | 76 | 95 |
| Շինութեան կարկատանաց վրայ . | 5 | 8 |
| Գանձակում անփոփոխ Անդամ Գ. Տէր Ներսէսեանցի առաջարկու-թեամբը՝ բաժանուած է մի քանի աղքատիկ ուսումնարանաց մէջ դա-սագրքեր, 310 հատ, որք արժէն ըն-կերութեան . . . . | 62 | |
| Գ. Տէր Ներսէսեանցի միջնորդու-թեամբ խորհուրդը առաքել է ի նպաստ Գանձակայ և Սղնախու նահանգներում լինող աղքատիկ երկսեռ ուսումնա-րանաց . . . . . | 155 | |
| Ս. Պետերբուրգ ուսանող Մադին-եանցին առաքուած է միանուագ . | 120 | |
| Գանձակում մանր ծախքէ եղած. | 10 | |
| Ընդ ամէնը | 1930 | 18 |

Մնում է առ 1ն Յունվարի 1875 ամի

| | | |
|---|---|---|
| Ա. Առ ձեռն պատրաստի զուտ գումար . . . . . | 9272 | 75 |
| Բ. Խաղարկական 45 հատ բիլեթ-ներ (104ր. 50 կ. հատը) . . | 4702 | 50 |
| | 13975 | 25 |
| Ընդ ամէնը | 15905 | 43 |

## ՀԱՇԻՒ

### ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԱՑ ԿՐԿԻՆ ՍԵՌԻՑ ՀԱՅՈՑ Ի ԳԶԼԱՐ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Հոգաբարձութիւն Գզլարայ Հայոց Հոգևոր երկսեռ Դպրոցաց՝ ընդ սմին առաքելով ի Խմբա-